

13.

ԲԱՆԱԿ ԵՎ ԶԱՂԱԶԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ԻԴԵԱԼԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ
ԻՐԱԿԱՆ ԿԱՊԻ ՈՐՈՇ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ

ՇՈՒՆԱՆ ԽԱԹԱՄԱՅՅԱՆ

Բանակի անհրաժեշտության փաստը Հայաստանի համար ապացույցների կարիք չունի (առնվազն տեսանելի ապագայում): Քանի դեռ գոյություն ունեն պետական շահեր, որոնք օբյեկտիվ կերպով կարող են հակասել այլ պետությունների շահերին, գոյություն ունեն նաև օբյեկտիվ սպառնալիքներ, ինչպես և պետական շահերի պաշտպանության կենսական անհրաժեշտություն: Հենց պետությունն է իրականացնում ազգային անվտանգության ապահովման հիմնական գործառույթները՝ «Պետության նպատակը գլխավորապես անվտանգության ապահովումն է» (Հոբս, «Լեիաթան»):

Միևնույն ժամանակ, հենց պետության ինստիտուտին են վերագրում թե՛ հիմնական սպառնալիքների աղբյուր լինելը¹, և թե՛ անհատի, հասարակության և ազգի անվտանգության (համալիր անվանումը՝ «ազգային անվտանգություն») խնդիրների համակարգային լուծման հնարավորությունները: Պատճառն այն է, որ հենց պետությունն է ի զորու ստեղծել, և ամենակարևորը՝ համախմբել դրա համար անհրաժեշտ միջոցները: Ընդ որում, ազգային-պետական քաղաքականության վերջնական նպատակը կախված է տվյալ պետության «մեկնարկային» պայմաններից:

¹ Բացառությամբ «ոչ պետական» ահաբեկչության (Շն):

Ազգային-պետական անվտանգության ապահովման գործընթացը սովորաբար ծավալվում է ազգային վերնախավային խմբերի միջև մրցակցության պայմաններում: Այդ պայքարի նպատակներից մեկն է՝ միջազգային հարաբերությունների համակարգում սեփական պետության համար «մեկնարկային» լավագույն պայմանների ստեղծումը: Նման մրցակցությունը, որպես կանոն, հանգեցնում է արտաքին սպառնալիքների (ռազմական, թե այլ բնույթի) առաջացմանը: Ընդ որում, սպառնալիքների ամբողջական վերլուծությունը պետք է հաշվի առնի այնպիսի գործոններ, ինչպիսիք են այլ պետությունների թշնամական քաղաքականությունը, նրանց իրական ռազմական հնարավորությունները և իրական սպառնալիքները, որոնք սովորաբար գտնվում են շահերի և այլ գործոնների «հատման կետում»: Եվ հենց դրանով է պայմանավորված ազգային շահերի պաշտպանության ժամանակակից պետական ինստիտուտների՝ բանակի, ոստիկանության և անվտանգության ծառայությունների անհրաժեշտությունը:

Ձինված ուժերը պետության հզորության կարևոր բաղադրիչ են, պետական ինքնիշխանության խորհրդանիշ, ազգի արտաքին անվտանգության ապահովման և երկրի, ինչպես նաև այդ երկրի դաշնակիցների, տարածքային ամբողջականության պահպանման միջոց: Ձինված ուժերի նշանակությունը պետության ներքաղաքական դաշտում տարբեր երկրներում տարբեր է, ինչը պայմանավորված է նաև արտաքին քաղաքական պայմաններով և միտումներով:

Քաղաքացիական առումով, Հայաստանի ռազմական քաղաքականությունը պայմանավորվում է միջազգային իրավունքի նորմերի, ՄԱԿ-ի և ԵԱՀԿ-ի սկզբունքների նկատմամբ ստանձնած պարտավորություններով և ունի բացառապես պաշտպանական բնույթ: Այդ քաղաքականությունում համակցվում են հավատարմությունը խաղաղության սկզբունքներին և ազգային շահերն ու երկրի անվտանգությունը պաշտպանելու վճռականությունը: Ընդ որում, նախապատվությունը տրվում է պատերազմների և ռազմական հակամարտությունների կանխարգելման քաղաքական, դիվանագիտական, տնտեսական, իրավական և այլ՝ ոչ ռազմա-

կան միջոցներին, ինչպես նաև համաշխարհային հանրության խաղաղության սպառնալիքների, դրա խախտման կամ ազդեցության ակտերի կանխարգելմանն ուղղված համատեղ գործողություններին: Այդ խնդրի լուծման համար Հայաստանը պետք է տիրապետի ոչ միայն և ոչ այնքան զինված պայքարի ժամանակակից միջոցների, այլև, որ ամենակարևորն է, ունենա ժամանակակից բանակ՝ բառիս ամենալայն իմաստով:

Դժվար չէ նկատել, որ հետխորհրդային տարածքի նորանկախ որոշ պետություններ շարունակում են «հին տիպի նոր բանակ» կառուցել: Սա մասամբ պայմանավորված է այդ երկրներին հատուկ արտաքին քաղաքական գերակայություններով և պարտավորություններով, մասամբ էլ՝ պետական մտածողության իներցիայով: Վերջինս հանգեցնում է նրան, որ միայն ռազմական մարտահրավերներն են արժանանում լուրջ ուշադրության, իսկ հասարակական փոխակերպումների տրամաբանությունից բխող մարտահրավերները և պահանջները՝ անտեսվում: Թվում է, թե նախորդ հարյուրամյակների ընթացքում պետական մտածողության ունակությունները կորցրած լինելով, Հայաստանը պետք է մասամբ թոթափած լիներ նաև դրա իներցիան: Սակայն կառավարման արդեն հնացած միջոցներին կառչածությունը և մտածողության իներցիան մեզանում նկատելի են ցանկացած ոլորտում:

Ինչն է պայմանավորում մեր երկրում ռազմաշինության տրամաբանությունը: Վերլուծությունը ցույց է տալիս, որ ռազմական շինարարության ոլորտում զարգացման և բարեփոխումների ուղիները, բացի բանակի այս կամ այն տիպի կառուցվածքում շահագրգռված քաղաքական վերնախավերի շահերից, պայմանավորվում են նաև ներքին և արտաքին քաղաքական իրողություններով:

Պետք է նշել, որ Հայաստանի կոմպլեքսնատար արտաքին քաղաքականության արդյունքները ռազմական ոլորտում բավական արտասովոր են. այսօր մեր զինված ուժերը զուգահեռաբար մի քանի, հաճախ միմյանց բացառող օրինակների են հետևում: Եթե ավելացնենք, որ որոշումների կայացման ոլորտում մեզ մոտ հաճախ գերակշռում են ոչ ինստիտուցիոնալ գործոններն ու շարժառիթները, ապա իրավիճակն անհույս է թվում:

եվ որ ամենակարևորն է, այս ամբողջ համալիրը ստեղծվում է առանց հաշվի առնելու մեր կյանքի բոլոր ոլորտների և մտածողության վրա ներազդող հասարակական խորքային փոխակերպումները:

Քաղաքական համակարգը և բանակը

Բանակը հասարակական, սոցիալական օրգանիզմ է, որը օժտված է հասարակական ներազդեցության ողջ սպեկտրով և որն իր վրա է կրում հնարավոր բոլոր, մասնավորապես՝ քաղաքական ներազդեցությունները: Լինելով պետության ամենաշարժուն, կազմակերպված, կարգապահ և ամենակարևորը՝ զինված ինստիտուտը, բանակը միշտ գտնվում է քաղաքական գործընթացների կենտրոնում: Յանկացած երկրի զինված ուժերի տեղը և դերը հասարակությունում կախված է ոչ միայն արտաքին պայմաններից, այլև՝ տվյալ երկրի քաղաքական ռեժիմի տեսակից (դիկտատուրա, ավտորիտարիզմ, դեմոկրատիա): Սա հատկապես վերաբերում է ներքին անվտանգության ոլորտին: Ժամանակին Զ. Բոեզինսկին և Ս. Հանթինգտոնը ապացուցեցին, որ ուժեղ և զարգացած պետականությունը կարող է բնորոշ լինել թե՛ ժողովրդավարություններին, և թե՛ դիկտատուրաներին², ինչը հաստատում են նաև ամենաթարմ քաղաքագիտական ուսումնասիրությունները: Նույնը կարելի է ասել նաև զինված ուժերի մասին, սակայն ժողովրդավարության և դիկտատուրայի պայմաններում բանակի դերը փոքր-ինչ տարբեր է:

Մեր երկրի անկախացման առաջին տարիների քաղաքական պայմանները, մասնավորապես Ադրբեջանի հետ պատերազմը, քաղաքական գործընթացում ուժային կառույցների դերի կարևորման օբյեկտիվ պատճառ դարձան: Հայաստանում ԶՈՒ քաղաքական կյանքում ունեցած մեծ դերը պայմանավորված է ոչ միայն Ադրբեջանի կողմից ռազմական գործողությունների վերսկսման անընդհատ առկա վտանգով, կամ Թուրքիայի ոչ բարեկամական դիրքորոշմամբ, այլև՝ ներքաղաքական ասպարեզում գոյություն ունեցող մի շարք յուրահատկություններով:

² Brzezinski Z., Huntington S. "Political Power: USA/USSR", N.Y., 1963.

Քաղաքական համակարգի փոխակերպումներում զինված ուժերի դերը մեծ է եղել մասնավորապես 1990-1999թթ., երբ քաղաքական համակարգը ծայրահեղ անկայուն էր: Այսօր նորից բարենպաստ պայմաններ են ստեղծվել ներքին քաղաքականությունում բանակի դերի աճի համար: Երկրի քաղաքական համակարգի փոխակերպումը ոչ միայն չի ավարտվել, այլև թևակոխել է անորոշությունը հզի մի նոր փուլ: Այն կարող է հանգեցնել թե՛ ժողովրդավարական ինստիտուտների, և թե՛ իշխանավարման ավտորիտար մեթոդների արմատացմանը: Երկրում մինչև հիմա քաղաքական գործիչների միջև անհամաձայնություն է տիրում պետության առջև ծառայած կարևորագույն խնդիրների շուրջը. օրակարգում ոչ թե «ինչպե՞ս գործել», այլ «ի՞նչ անել» հարցն է: 2007-2008 թթ. ՀՀ-ում կայանալիք ընտրությունները կարող են իշխանության բերել այնպիսի ուժեր, որոնք յուրովի են պատկերացնում մեր երկրի հասարակական-քաղաքական զարգացման ուղին և Հայաստանի դերը միջազգային համակարգում:

Հայաստանի ժողովրդավարական զարգացման գործընթացը վերջին տարիներին զգալիորեն դանդաղել է, ինչը հասկանալու համար պարտադիր չէ կարգալ մեր երկրում տիրող իրավիճակը բավական մոռալ գույներով ներկայացնող *Human Rights Watch*, *Freedom House* կամ *Amnesty International* կազմակերպությունների գեկույցները: Վերջին տարիներին մի շարք հայաստանյան քաղաքական կուսակցություններ, գործիչներ և ԶԼՄ-ներ բնութագրում են մեր երկրում գործող քաղաքական ռեժիմը որպես ոստիկանական և ռեպրեսիվ: Միջազգային կառույցների Հայաստանին վերաբերող գնահատականները և հաշվետվությունները քաղաքականապես ավելի կոռեկտ են, բայց, փաստորոն, համահունչ են վերը նշված գնահատականներին: Սակայն այդպիսիները հանգեցնում են քաղաքական ոչ ճիշտ եզրակացությունների (բացահայտ ռեպրեսիվ ռեժիմները ժամանակակից աշխարհում շատ ավելի պակաս կայուն են, քան ժողովրդավարության նմանակեղծումները):

Հայաստանում ծավալվող քաղաքական գործընթացների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանց ձևավորման վրա ազդել և շարունա-

կում են ազդել թե՛ այն կոնկրետ պատմական ֆոնը, որը ձևավորել է հայ հասարակության հասարակական-քաղաքական պատկերացումները, և թե՛ հետխորհրդային տարածքում առկա իրականությունը և աշխարհաքաղաքական միտումները: Հայաստանում հասարակական ինստիտուտների զարգացման ուղու ընտրությունը մեծապես կախված է այնպիսի գործոններից, ինչպիսիք են Լեոնային Ղարաբաղի խնդրի կարգավորված շինելը, 1915-1922թթ. Հայոց ցեղասպանությունից միջազգային ճանաչման հարցը, երկրի աշխարհագրական դիրքը, փոխհարաբերությունները հիմնական քաղաքական պայմանադիր կողմերի հետ (ինչպիսիք են ՌԴ-ն, ԱՄՆ-ն, ԵՄ-ն, Թուրքիան), երկրի տնտեսական իրավիճակը և այլն:

Ազգային զինված ուժերի ձևավորման գործում որոշիչ դեր խաղաց այն փաստը, որ Հայաստանի ապախորհրդայնացումը ընթանում էր քաղաքացիական և ազգային գիտակցության բուռն վերելքի պայմաններում: 1991-ից սկսած Հայաստանում քաղաքական համակարգի ձևափոխման գործընթացը սկզբնական շրջանում ծավալվում էր, այսպես կոչված, «ժխտման» մթնոլորտում, երբ հին (կոմունիստական) հասարակության մոդելին հակադրվում էր նորը: «Մշակութային ազգայնականության» գաղափարախոսությունը դարձավ ժողովրդավարացման ցեմենտը. այն դրոշը, որի ներքո համախմբվեց համարյա ողջ հասարակությունը (այլ ոչ թե միայն արմատական ազգայնականները): Արտաքին վտանգի առկայությունը ևս ունեցավ իր դերը:

Իրադարձությունների հետագա զարգացման համատեքստում 1988-1994 թթ. հայաստանյան հասարակությունում ծաղկում ապրեց հասարակության համախմբմանը միտված երկու հիմնական գաղափարախոսություն: Մեկը պետության անկախ զարգացումը տեսնում էր հասարակության ազատական-ժողովրդավարական մոդելով վերափոխման մեջ (ընդ որում, այս գաղափարախոսությունը հիմնականում սատարում էր տեխնիկական կրթությամբ և հումանիտար ոլորտի մասնագետների շարքերից դուրս եկած իշխանական նոր վերնախավը, որը, սակայն պետական և քաղաքական գործունեության փորձ չունեի): Մյուսը հիմնվում էր ազգային անկախ պետության սահմաններում հայ ժո-

ղովրդի համախմբման և նույնիսկ «փրկման» (հաճախ՝ տնաբույս) գաղափարախոսությունը վրա: Այդուհանդերձ, անկախությունն առաջին իսկ տարիներին պարզ դարձավ, որ հայ հասարակության կյանքի անհատական, ընտանեկան և կոլեկտիվ ձևերում իշխում են ինչ որ վերացականորեն պետական և կոնկրետ կլանային-խմբային շահերը:

Այս տարիներին բնակչության կենսամակարդակի կտրուկ անկումը, զանգվածային աշխատազրկությունը և արտագաղթը, առաջին մասնավոր ձեռնարկությունների և բանկերի առաջացումը որոշիչ եղան հասարակական-քաղաքական կյանքի և մարդկանց տրամադրությունների ձևավորման գործում: «Իրավունքները» և «ազատությունները» մարդկանց համար արժեզրկեցին ոչ որպես այդպիսիներ, այլ՝ կյանքի հնարավորություններն օգտագործելու համար պայմաններ: ԽՍՀՄ փլուզմանը հաջորդած տարիների ընթացքում վերնախավերի հիմնական նպատակը անկախ պետականության հիմք հանդիսացող պետական ինստիտուտների ստեղծումն էր, որոնցից մեկն էլ դարձավ բանակը:

Շուտով, սակայն, հաստնացավ այն պահը, երբ ավելի ու ավելի էր զգացվում քաղաքացիական հասարակության և հասարակական ուժեղ ինստիտուտների ստեղծման անհրաժեշտությունը: Եվ մինչ պետության ֆորմալ ատրիբուտների, այդ թվում անկախ Հայաստանի 1995 թ. Սահմանադրության ընդունումը հասարակական առանձնակի տարածայնությունների տեղիք չտվեցին, հասարակական զարգացման ուղիների ընտրությունն ավելի ու ավելի էր սուր քննարկման առարկա դառնում:

Ժամանակը ապացուցում է, որ Հայաստանում իշխանավարման որդեգրված համակարգը կարևոր գործոն դարձավ ոչ միայն հասարակական ինստիտուտների որոշակի ուղղությամբ զարգացման, այլև՝ նոր հասարակական-մշակութային հարաբերությունների և սովորությունների ամրապնդման համար: Անկասկած, քաղաքական համակարգի ինստիտուցիոնալ ընտրությունը (սա նախ և առաջ վերաբերում է իշխանավարման նախագահական կամ խորհրդարանական ձևի ընտրությանը) և պետական ինստիտուտների ձևավորման գործընթացը ուղղակի կերպով փոխկապակցված են: 20-րդ դարի 90-ական թթ. սկզբին այս հարցի

լուրջ քննարկմանը սկիզբ դրեց հայտնի սոցիոլոգ Հ. Լինցը³, որը նպատակ ուներ գիտականորեն ապացուցելու, այս, կարծես թե անհերքելի ճշմարտությունը: Նախագահական և խորհրդարանական համակարգ ունեցող երկրների հետանցումային զարգացման փորձի Հ. Լինցի կողմից կատարած համեմատությունը (վերլուծության են ենթարկվում նաև վիճակագրական տվյալները) ցույց տվեց, որ նախագահական համակարգը ավելի հաճախ է հանգեցնում քաղաքական անկայունության, իշխանության օրենսդիր և գործադիր մարմինների միջև դիմակայության, օրինականության սկզբունքների անտեսման, կառավարման ոլորտի մեջ թույլ տրվող սխալների ազդեցության մեծացմանը՝ երկրում ճգնաժամի խորացման վրա, և այլ բարդություններ⁴: Ժողովրդավարությունների հետագա համեմատական քննությունը (Ա. Վալենսուելա, Ա. Լեյփհարթ, Ա. Ստեպան, Ս. Սկաչ և այլն) ապացուցեց, որ ընտրական համակարգի տեսակը խորապես կապված է և՛ իշխանավարման ձևի, և՛ գործադիր մարմնի տիպի հետ: Օրինակ՝ լատինաամերիկյան այն երկրները, ուր հետպատերազմյան տարիներին⁵ տիրում էր կիսանախագահական համակարգ, ղեկավարման անարդյունավետության պատճառով հայտնվեցին քաղաքական փակուղու մեջ: Բացի այդ, երևան բերելով, այսպես կոչված, «մեծամասնության էֆեկտը», այս համակարգը հանգեցնում է գործադրի գերիշխանությանը օրենսդրի վրա՝ արդյունքում հանգեցնելով իշխանության երեք ճյուղերի փաստացի սերտաճման: Նաև չի ապահովվում քաղաքական փոքրամասնությունների շահերի պաշտպանություն. իշխանամետ քաղաքական կուսակցությունները դառնում են ողջ ազգի շահերը ներկայացնելու հավակնություններ ունեցող «կորպորացիաներ»: Նման պայմաններում հասարակության կող-

³ Linz H., Stepan A. *Problems of Democratic Transition and Consolidation*. 1996. Baltimore.

⁴ Խոսքը կառավարման միանշանակ ավտորիտար ռեժիմներ ունեցող երկրների մասին չէ, այլ նրանց, որոնք կատարում են անցում դեպի ժողովրդավարություն (ՇԽ):

⁵ Նկատի ունենք Երկրորդ համաշխարհայինը:

մից ինստիտուցիոնալ մոդելի ընտրությունը կախված է ինստիտուցիոնալ բարեփոխումների ընթացքում քաղաքական ուժերի հարաբերակցությունից⁶: Թերևս, Հայաստանի անկախ պետականության կայացման պատմությունը դրա վառ ապացույցն է:

Այդպիսով, ժողովրդավարության «ուղղահայաց», պետականացված ինստիտուտների գործունեությունը դառնում է իշխանության ճյուղերի իրական բաժանման ձևավորման յուրատեսակ խոչընդոտ, ուղղակի կերպով ազդելով սոցիալական և քաղաքական «ճիշտ» ինստիտուտների կայացմանը. այնտեղ, ուր չկա քաղաքական առողջ, նորմալ մրցակցություն, պետական և հասարակական ինստիտուտների կայացման գործում, օրինաչափ դժվարություններից բացի, առաջ են գալիս սուբյեկտիվ խոչընդոտներ: Նման պայմաններում, իշխանության և կապիտալի ձևավորման և գործունեության գործընթացների էությունը շանդրադարձող ու ժողովրդավարացման ակներև տարրեր չպարունակող բարեփոխումներն ի վիճակի չեն իրական արդյունքների բերել:

Քաղաքական գործընթացների այսպիսի բանաձևը հղի է համալարգային բազմամյա ճգնաժամով: Իշխանության կոռումպացվածությունը մեծանում է. ի հայտ է գալիս և ամրանում «կորպորատիվ իշխանավարման» յուրահատուկ «հայկական» ձև⁷: Նման պայմաններում իշխանությունները «դառնում են հասարակությունից զատ գոյություն ունեցող, այդ հասարակությունը կառավարող և այն ներկայացնող ազնվական դաս»⁸: Համապատասխանաբար, մտավորականների ազդեցությունը և նրանց ներգրավվածությունը քաղաքականությունում հակված է զրոյականացման, իսկ «փողոցն» էլ կամ լրիվ օտարվում է քաղա-

⁶ А. Шеворский, *Демократия и рынок: политические и экономические реформы в Восточной Европе и Латинской Америке*, Москва, 1999.

⁷ Նշենք, որ «կորպորատիվ ժողովրդավարության» դասական ձևերը բնորոշ են նաև, այսպես կոչված, զարգացած ժողովրդավարություններին, մասնավորապես ԱՄՆ-ին (Շե):

⁸ Рассел Хардин, «Переход к корпоративной демократии?» *Прогнозис*, май 2006

քականությունից, կամ էլ մարգինալացվում: Արդյունքում, ֆաղաֆական ինստիտուտների հանդեպ անվտանգությունը դառնում է սովորական երևույթ, բերելով ոչ միայն ընտրական գործընթացի տարբեր փուլերում ընտրողների կրավորականության, այլև՝ քաղաքացիական ակտիվության ընդհանուր անկման, ինչն էլ անկանխատեսելի զարգացումների աղբյուր է դառնում: Մեանք ուժային կառույցների ֆաղաֆականության վրա ազդեցության և փոխներթափանցման տեսանկյունից հատկապես վտանգավոր են այն կարգի երկրների համար, ինչպիսին ֆաղաֆական զարգացման ներկա փուլում կարող է դասվել Հայաստանը:

Նշենք, որ ֆորմալ տեսակետից ինքնիշխան պետությունները (այսօր ՄԱԿ-ի անդամ երկրները թվով 192-ն են), այնուամենայնիվ, բավական տարբեր են միմյանցից. տարբեր է անգամ նրանց իրական ինքնիշխանության աստիճանը: Որոշ պետություններ (որոնց թիվն այնքան էլ շատ չէ) ամբողջությամբ անկախ և ինքնուրույն են իրենց ներքին ու արտաքին քաղաքականությունում, մնացածներն իրենց ինքնիշխան լիազորությունների կատարման հարցում ավելի շուտ կախված են այլ պետություններից և միջազգային հանրությունից, քան սեփական քաղաքական, տնտեսական կամ այլ ռեսուրսներից և ի վիճակի չեն քիչ թե շատ ինքնուրույն կերպով արձագանքել ներքին և արտաքին մարտահրավերներին: Ըստ էության, պետությունների հաջողակության, կառավարելիության, կարողության և արդյունավետության աստիճանը տարբեր է. պայմանականորեն, մի կողմում «հաջողակ ինքնիշխան պետություններն» են, իսկ մյուսում՝ «չկայացած, ոչ ինքնիշխան պետությունները» (failed states՝ ձախողված պետությունները)⁹:

ԱՄՆ Պաշտպանության ազգային ինստիտուտին կից Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի փորձագետներն առանձնացնում են համաշխարհային քաղաքական ասպարեզում գոր-

⁹ Мельвиль А. Ю., Ильин М. В., Мелешкина Е. Ю., Миронюк М. Г., Полуниин Ю.А., Тимофеев И.Н., “Опыт классификации стран”, *Полис*, номер 5, М., 2006 г.

ծող պետությունների չորս տեսակ¹⁰ շուկայական ժողովրդավարական համակարգերով զարգացած պետություններ, անցումային երկրներ (ինչպիսիք են, օրինակ՝ Ռուսաստանը, Չինաստանը և Հնդկաստանը, որոնք վառ արտահայտված ազգային քաղաքականություն են վարում և ձգտում են միջազգային հարցերում առաջատար դեր խաղալ), այսպես կոչված «հերձվածող պետություններ» (այսօրվա դրությամբ, այդ փորձագետների կարծիքով՝ Իրան և Հյուսիսային Կորեա)¹¹ և անկայունության հիմնական օջախ համարվող «մտահոգիչ» կամ «չկայացած» պետություններ (ինչպիսիք, օրինակ՝ Ռուանդան, Սոմալի և Բոսնիան են): Ինստիտուտի փորձագետների կարծիքով, հենց այդ վերջին կարգին պատկանող պետություններում են ի հայտ գալիս միջազգային այնպիսի սպառնալիքներ, ինչպիսիք են արհաբեկչությունը, կազմակերպված հանցավորությունը, թմրանյութերի զանգվածային տարածումը և փախստականների հոսքի մեծացումը¹²:

¹⁰ *Strategic Assessment 1999. Priorities for a Turbulent World*. Institute for National Strategic Studies. National Defense University. Washington D.C., 1999. P. XIV, 5-8.

¹¹ 90-ական թվականների վերջում ԱՄՆ «հերձվածող» պետությունների շարքին դասում էր Հյուսիսային Կորեան, Պակիստանը, Իրաքը, Իրանը, Աֆղանստանը և Լիբիան: 2001 թվականի սեպտեմբերի 11-ին ԱՄՆ-ում տեղի ունեցած արհաբեկչական գործողություններից հետո ԱՄՆ-Պակիստան հակաարհաբեկչական դաշինքի ստեղծման արդյունքում վերջինս այս ցանկից դուրս հանվեց: 2001-ին՝ Աֆղանստան, իսկ 2003-ին՝ Իրաք ԱՄՆ ներխուժումից հետո այս երկու երկրները ևս դուրս եկան «հերձվածող» պետությունների ցանկից: Լիբիան ցանկից դուրս եկավ դիվանագիտական ճանապարհով գրանցված հաջողությունների արդյունքում:

¹² «Չկայացած» պետություն հասկացության հետ սերտորեն կապված են այնպիսի երևույթներ, ինչպիսիք են ավելցուկային միգրացիան, թերսնուցման խնդրի առկայությունը (կամ սննդի օրաբաժնի պակասը) բնակչության ավելի քան 10 %-ի մոտ, ընթացիկ վճարային հաշվեկշռի մշտական բացասական սաղոդոն, էներգակիրների ներմուծումից երկրի կախվածությունը, ռազմական ագրեսիայի սպառնալիքի առկայությունը, իշխանափոխման ոչ սահմանադրական փորձերի կամ պետական հեղաշրջումների առկայությունը և այլ գործոններ (ՇԽ):

Ավելացնենք, որ հենց «չկայացած» պետություններն են, որ իրենց աշխարհաքաղաքական հարևանների համար նախապայմաններ են ստեղծում սեփական ներքին քաղաքականությունում ակտիվորեն ներգրավվելու, իրենց դեմ տարաբնույթ պատժամիջոցներ կիրառելու, ինչպես նաև քաղաքական զարգացումների ակտիվ շրջանակներից և տնտեսական նախագծերից դուրս մղվելու համար:

Արևմտյան քաղաքագիտությունում, Հայաստանը, չնայած գոյություն ունեցող քաղաքական ռեժիմի կիսաավտորիտար (կամ «մասամբ ժողովրդավարական») համակարգերին վերագրմանը, դեռևս չի դասվում *failed states*-ի (ձախողված պետությունների) շարքին: Սակայն միջազգային և եվրոպական կառույցներում Հայաստանի վերաբերյալ կարծիքի ձևավորման հիմք են ծառայում միջազգային վարկանիշային տարաբնույթ կազմակերպությունների գնահատականները¹³: Վերջիններս ելնում են նրանից, որ կիսաավտորիտար ռեժիմները չի կարելի դիտարկել որպես ոչ-կատարյալ, բայց կատարելագործմանը ձգտող ժողովրդավարություններ: Ընդհակառակը, ըստ այդ գնահատականների, դրանք լճացած ռեժիմներ են, որոնք ժողովրդավարության դիմակի ներքո ինքնավերարտադրվում են (իմիտացիոն ժողովրդավարությունը նման ռեժիմներին օգնում է խուսափել քաղաքական ազատ մրցակցության հետ կապված ռիսկերից)¹⁴: Անգամ ռուսաստանյան այնպիսի լուրջ երկրագիտական ուսումնասիրության մեջ, ինչպիսին ՌԻ ԱՔՆ կից Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտի (համալսարանի) «Արդի քաղաքական ատլաս» նոր նախագիծն է, Հայաստանը դասվում է «ժողովրդավարական վեկտորով», բայցևայնպես, այսպես կոչված, «ոչ ինքնուրույն պետությունների կլաստերին»¹⁵, ընդ-

¹³ Այս գործում նրանց «բնական դաշնակիցներն» են Հայաստանի հանդեպ ոչ բարեկամական պետությունները և ռեժիմները (Շև):

¹⁴ Քաղաքագետ Մարինե Օթուեյի գնահատականն է:

¹⁵ А.Ю. Мельвиль, М.В. Ильин, Е.Ю. Мелешкина, М.Г. Миронюк, Ю.А. Полуниин, И.Н. Тимофеев, «Опыт классификации стран», журнал «Полис», номер 5, М., 2006 г.

գրկելով այն «Թույլ պետականությունը և փաստացի առանց ազդեցություն ոչ ինքնուրույն ժողովրդավարական «կլոնների» խմբում»:¹⁶

Համաշխարհային քաղաքական դիսկուրսում անբավարար գնահատականների գերակայությունը խիստ անցանկալի է Հայաստանի համար, եթե հաշվի առնենք, որ մեկուսացումից դուրս գալը, համաշխարհային գործընթացներին ինտեգրումը և միջպետական կապերի ամրապնդումը երկրի արտաքին քաղաքականության գերխնդիր են հռչակված (հատկապես, որ մի շարք պատճառներով «քաղաքակիրթ» երկրների կարծիքը ժողովրդավարության ոչ ավելի բարձր մակարդակի վրա գտնվող, սակայն բնական ավելի հարուստ ռեսուրսներ ունեցող երկրների մասին հաճախ ավելի բարձր է, քան Հայաստանի մասին)¹⁷:

Սա ևս մեկ անգամ ապացուցում է՝ կոչվել «չկայացած պետություն» Հայաստանի համար նշանակում է մտնել փակուղի (ինչը ԶԼՄ-ների շնորհիվ կենցաղային մակարդակում «քաղաքական զարգացումներ» են կոչվում), հետևաբար քաղաքական ու սոցիալական լճացումից դուրս գալը Հայաստանի համար կենսական անհրաժեշտություն է¹⁸: Ժամանակն է վերջ տալ ազգային գաղափարի շարշրկված որոնումներին: Մե՛նք ունենք ազգային գաղափար՝ իրապես հայրենասիրական, հիմնված յուրաքանչյուր քաղաքացու ազատության, ապահովության և պաշտպանվածության սկզբունքների վրա, ուղղված ինքնաբավ, տնտեսապես և

¹⁶ А.Ю. Мельвиль, “Политический атлас современности: замысел и общие теоретико-методологические контуры проекта”, журнал “Полис”, номер 5, М., 2006 г.

¹⁷ ԱՄՆ նախագահ Զորջ Բուշի նամակում, որ 06. 06. 2006 Բաքվում «Կասպից ծովի նավթը և գազը» 13-րդ ցուցահանդեսի բացմանն ընթերցեց ԱՄՆ պետքարտուղարի եվրոպայի և Ասիայի հարցերով տեղակալ Մեթ Բրայզան ասվում է, որ «Ադրբեջանը տարածաշրջանում առաջատար ուժ է և անվտանգության երաշխիք» (ՇԽ):

¹⁸ Նման կարծիքի են նաև հայաստանցի որոշ այլ հեղինակներ (տե՛ս Armen Айвазян, “О современном кризисе армянства и фиктивности армянского государства”, Голос Армении, 19 сентября 2002 г. կամ Արմեն Այվազյան «Հիմնատարրեր՝ Հայաստանի ազգային անվտանգության հայեցակարգի», մասն առաջին, «Լուսակն», Երևան, 2004, էջ 9, 39-45):

սոցիալապես բարձր զարգացվածություն, ինքն իրեն պաշտպանելու և մտածված արտաքին քաղաքականության շնորհիվ արտաքին սպառնալիքները նվազեցնելու ունակ, միջազգային բավականաչափ բարձր վարկանիշով պետություն կառուցմանը:

Բանակը որպես հասարակության մաս

Բանակը հասարակության հետ կապված լինելով բազում կապերով, դրա միայն մի մասն է կազմում: Արդյունքում, հասարակությունում ի հայտ եկող կոնֆլիկտային դիմակայությունների հանգեցրած այս կամ այն որոշումների քաղաքական բոլոր հետևանքներն անդրադառնում են բանակի վրա: Հանրության մեջ կարծիք է ձևավորվել, որ շատ դեպքերում բանակն ապահովում է իշխանությունների քաղաքական նպատակների իրագործումը և հանդես է գալիս ձևավորված ռեժիմի կայունության երաշխիք: Իրոք, ոչ ժողովրդավարական պետություններում, բանակը, որպես կանոն, իշխող ռեժիմի կարևորագույն նեցուկն է: Չնայած օրենսդրորեն բանակին ոստիկանական գործառույթ չի վերագրվում, այնուամենայնիվ, որոշումների կայացման համակարգի թափանցիկության բացակայության դեպքում, փաստացի ոչինչ և ոչ ոք չի խոչընդոտում բանակն այդ նպատակով օգտագործելուն: Մինչդեռ կասկածից դուրս է, որ միայն բացառիկ դեպքերում և սահմանափակ ծավալով են զինված ուժերը կարող ներհասարակական կարգուկանոնի պահպանման միջոց լինել, ընդ որում, բոլոր այս դեպքերը պետք է ոչ միայն նախատեսված լինեն երկրի սահմանադրությամբ, այլև պետք է նմանատիպ որոշումների կայացման համար անթերի (թե՛ թափանցիկության և թե՛ լեգիտիվության առումով) մեխանիզմներ ունենան:

Այնպիսի երկրներում, ինչպիսին մերն է, զինված ուժերի գործունեության մեկ այլ՝ ոչ պակաս կարևոր գործոն է բանակի քաղաքական չեզոքությունը: Եթե երկրում, թեկուզ ձևականորեն, գոյություն ունի բազմակուսակցական համակարգ, բանակի ղեկավարությունը և կառավարումը գտնվում է մեկ, սովորաբար իշխող կուսակցության ձեռքում: Այդ գրություն արդյունքը լինում է այն, որ անգամ երկրում պաշտոնական

գաղափարախոսությունների բացակայության դեպքում այդպիսի պետությունները զինված ուժերում գաղափարախոսությունը առկա է և ունի կուսակցական բնույթ (թեպետև այն կարող է իրականում տարբերվել այդ կուսակցության հռչակած ծրագրային հիմնարար դրույթներից): Այդ գաղափարախոսությունն բուն էությունը սովորաբար խիստ հակասում է երկրի արտաքին քաղաքական հայտարարությունների և նկրտումների տրամաբանությունը: Արտաքին քաղաքականության հետ առնչվող տևական խնդիրների առկայության պայմաններում իշխանություններն առավել հաճախ են դիմում ժողովրդին՝ կոչ անելով «համախմբվել» այդ գաղափարախոսությունն նպատակների և խնդիրների շուրջը: Սակայն այդ գաղափարախոսության պաշտոնապես ձևավորված շինելը դրա հետ կապված նպատակներն ու խնդիրները ավելի աղոտ է դարձնում, իսկ իշխանությունների կոչերն ավելի անկանխատեսելի:

Ինչ վերաբերում է ժողովրդավարության ցանկալի մակարդակի և երկրի ինքիշխանության ապահովման պահանջվող մակարդակի հարաբերակցությանը, ապա առաջին հայացքից, իսկապես, գոյություն ունեն որոշ հակասություններ: Համաշխարհային փորձի վերլուծությունը փաստում է, որ ժողովրդավարության կոնսոլիդացիայի օբյեկտիվ պայմաններից մեկը կարող է համարվել ոչ թե ուժեղ, այլ՝ համեմատաբար թույլ ռազմա-արդյունաբերական համալիրը. փոքրաթիվ քանակը, ազգային բանակի «դեկորատիվ» բնույթը բացառում են ներքին քաղաքականությունում բանակի կիրառման հնարավորությունները, այսպիսով գործնականում բացառելով նաև զինված ուժերի միջոցով ավտորիտար ռեժիմի հաստատման հնարավորությունները (նման իրավիճակ է էստոնիայում և Լիտվայում): Այնուամենայնիվ, ոչ բոլոր երկրներն են կարող իրենց նման մոտեցում թույլ տալ. հաշվի առնելով արտաքին սպառնալիքների առկայությունը, Հայաստանը չի կարող թուլացնել իր բանակի մարտունակությունը, սակայն ապագայում կարող են ստեղծվել պայմաններ, երբ բանակը կլինի եթե ոչ զուտ «նոմինալ» քաղաքական միավոր, բայց իր թափանցիկությունը, իր տեղը և դերը պետական ինստի-

տոււնների շարքում չի պահանջի հասարակութունից և ոչ մի հավելյալ «ներողամտութուն»¹⁹:

Հայտնի հանգամանքների բերումով, Հայաստանում սեփական բանակի ձևավորումը սկիզբ առավ այն ժամանակ, երբ երկիրը դեռ ԽՍՀՄ կազմում էր (ինչն այն ժամանակ խորհրդային օրենսդրությամբ հակասահմանադրական գործողություն էր համարվում): Հավանական է, որ հայկական բանակի ծննդի «հակասահմանադրականությունը» մինչև հիմա էլ դեռ ներազդում է հասարակութունում բանակի ընկալման վրա: Իսկ մեր ԶԼՄ-ներում, հայկական բանակում տիրող իրականության լայնածավալ քննադատությանը զուգընթաց, գոյություն ունի նաև մեկ այլ միտում՝ երբ ազգային բանակի «հատուկ» դերը ճանաչելով, գրեթե աստվածացվում են ոչ միայն հեռավոր անցյալի գորավարները, այլև նրանք, ում (հաճախ ոչ միանշանակ) գործունեությունն ու հայտարարությունները դեռ վառ են հասարակության մեջ, որը ներկայումս բավականին սթափ հայացքով է նայում այս ամենին և միտված չէ և ոչ մեկին աստվածացնելու:

¹⁹ Ինչպե՞ս լուծել այս հակասությունը: Եթե խոսենք արդի քաղաքականության մեջ ընդունված և ռազմավարական տեսակետից առավել արդյունավետ ուղիների մասին, ապա գլխավոր և ամենակատուալ ուղղությունը պետք է դառնա արտաքին ռիսկերի նվազեցմանն ուղղված արտաքին քաղաքականությունը, բոլոր հնարավոր դիվանագիտական ու զուտ քաղաքական լծակների օգտագործմամբ: Հայաստանի շուրջ ստեղծված «անելանելի» իրավիճակը պետք է հետզհետե հաղթահարվի, և որքան շուտ, այնքան լավ Հայաստանի քաղաքական, տնտեսական ու սոցիալական զարգացման համար: Նշենք, որ այդ գործընթացի սկիզբը պետք չէ հետաձգել այն պատճառաբանությամբ, թե մեր տարածաշրջանային հարևանների քաղաքական նպատակները բոլորովին այլ են և իբր Հայաստանից այդքան էլ շատ բան կախված չէ: Համոզված ենք, որ ամեն պետություն ունի արտաքին քաղաքականության յուրահատուկ ռեսուրսներ, որոնք պարտավոր է օգտագործել առավել արդյունավետ կերպով:

Ի՞նչ անել (արժե՞ արդյոք հեծանիվ հայտնագործել)

Համաձայնենք, որ միայն «իրապես քաղաքացիական հասարակությունն է տիրապետում ժողովրդավարական կառավարության և ռազմական աստիճանակարգի միջև տարբերությունների (եթե ոչ՝ կոնֆլիկտների) հարթման ռեալ միջոցների, որոնց նպատակն է ռազմական արդյունավետ, բայց, միևնույն ժամանակ, ժողովրդավարության հիմնական ինստիտուտների համար սպառնալիք չհանդիսացող կազմակերպվածքի կառուցումը»²⁰:

Ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության խնդիրն անգամ նորանկախ տարբեր պետություններում տարբեր կերպ է ընկալվում և մեկնաբանվում. համապատասխանաբար, տարբեր է նաև այդ երկրներում ռազմա-քաղաքացիական հարաբերությունների մեջ բարեփոխումների խնդրի առաջնայնությունը: Մասնավորապես Բալթյան երկրներում ռազմա-քաղաքացիական հարաբերությունների ժողովրդավարացումը միանշանակ դիտարկվում է որպես նրանց «արևմտականացում», «խորհրդային» մոդելից մաքսիմալ հեռացում և ՆԱՏՕ-ի երկրներում ռազմա-քաղաքացիական հարաբերությունների կազմակերպվածքի մոդելին նմանեցում: Բալթյան երկրներում, ի տարբերություն, օրինակ՝ Ուկրաինայի կամ Ռուսաստանի, չեն կառուցում յուրահատուկ «բալթիկ» մոդել: Փոխարենը՝ Արևմտյան Եվրոպայի, ԱՄՆ, Սկանդինավյան երկրների փորձը ուսումնասիրելով, այդ երկրները արևմտյան զարգացած երկրների որոշակի «միջինացված» մոդելն ադապտացնում են սեփական պայմաններին: Կենտրոնական Ասիայի և Հարավային Կովկասի նորանկախ մի շարք պետություններ ռազմա-քաղաքացիական հարաբերությունների վերակառուցումն իրականացնում են սկզբունքորեն այլ սոցիալ-քաղաքական պայմաններում և քաղաքական այլ մշակույթի համատեքստում: Այդ պայմանները չեն ենթադրում Եվրոպայի զարգացած ժողովրդավարությունների քաղաքական մշա-

²⁰ Манфред Диль, полковник Генштаба в отставке ВВС ФРГ, “Россия и НАТО сверяют военные реформы”, *Независимое военное обозрение*, 04.07.2003 г.

կույթից վերցված սկզբունքների մեխանիկական փոխադրում կամ ռազմական ոլորտի վրա ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության ներմուծում: Հետխորհրդային տարածքի մի շարք երկրներ (հատկապես Թուրքմենստանը, որոշ չափով՝ Ուզբեկստանը և Բելառուսը) ռազմա-քաղաքացիական հարաբերությունների ոլորտում վերարտադրում են խորհրդային համակարգի տարրերը կամ մնացուկները: Խոսքը ռազմական ոլորտին, ղեկավարման ավտորիտար մեթոդներին վերաբերող ողջ տեղեկատվության գաղափարախոսական խիստ վերահսկողության, ուժային նախարարությունները հասարակական կամ որևէ այլ տեսակի (բացի նախագահականից) քննադատությունից զերծ պահելու, խորհրդարանների արհեստական թուլացման և նրանց իրավասությունների փաստացի սահմանափակման մասին է²¹:

Մինչդեռ ժողովրդավարական զարգացած երկրներում վաղուց արդեն մշակվել և գործնականում կիրառվում են հասարակության մեջ զինվորականների տեղի և դերի սահմանազատման հիմնական սկզբունքները, չնայած դրանց կիրառումը երկրներից յուրաքանչյուրում ունի որոշակի առանձնահատկություններ.

- ՁՈՒ գործադիր իշխանության ընդամենը մի մասն են կազմում,
- ՁՈՒ նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են խորհրդարանը, ֆաղափական ղեկավարությունը, դատական համակարգը և ֆաղափացիական ողջ հասարակությունը,
- ՁՈՒ ենթարկվում են ժողովրդավարական ճանապարհով ձևավորված լեզիտիմ ֆաղափական ղեկավարությանը, պաշտպանու-

²¹ *Перестройка военно-гражданских отношений в новых независимых государствах* / Центр политических и международных исследований, Женевский центр по демократическому контролю над вооруженными силами. Под ред. А. Никитина. - М.: ЦПМИ, DCAF. - 2003 г. (գիրքը Քաղաքական և միջազգային հետազոտությունների կենտրոնի /Ռուսաստան/ և Զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության ժնկյան կենտրոնի /Շվեյցարիա/ հետազոտական միջազգային նախագծի արդյունքն է):

թյան ֆաղաֆացիական նախարարին և այդ ղեկավարության ֆաղաֆական հրահանգներին,

- ԶՈՒ աներկբայորեն նսնաշում են օրենքի գերակայությունը, գործում են սահմանադրությամբ իրենց վերագրված խնդիրների շրջանակներում (երկրի պաշտպանություն և դրա արտաֆին, բացառիկ դեպքերում՝ նաև ներֆին անվտանգության ապահովում),
- ԶՈՒ ֆաղաֆականապես չեզոք են,
- ԶՈՒ ֆինանսավորվում են բացառապես պետական բյուջեով:

Վերը նշված հիմնարար սկզբունքների ձևավորումը թերևս հնարավոր է գառնում, երբ.

- սահմանադրորեն սահմանվում են սոցիալական արժեքները (արժանապատվություն և մարդու իրավունքներ), երաշխավորվում է օրենքի գերակայությունը, իշխանության թևերի սահմանադրական բաժանումը (օրենսդիր, գործադիր և դատական նյութերի), ԶՈՒ դերի և խնդիրների սահմանագատումը,
- գործող խորհրդարանն ապահովում է ազատ ընտրություններ, բազմակուսակցականություն, ստեղծում և կազմակերպում է ԶՈՒ խնդիրներով զբաղվող անհրաժեշտ ենթակառուցյուններ (բյուջետային կոմիտե, պաշտպանության հարցերի կոմիտե, «խորհրդարանական օմբուդսմենի»,
- ֆաղաֆացիական ղեկավարումը հիմնվում է նախագահ-վարչապետ-պաշտպանության նախարար ֆաղաֆական հստակ աստիճանակարգման վրա (ընդ որում, Գլխավոր շտաբի ղեկավարը ենթարկվում է պաշտպանության նախարարին),
- առկա է առանց իր իրավասությունից որևէ այլ մասնագիտացված դատարանի դատական անկախ համակարգ (ընդ որում, ռազմական տրիբունալների գործունեության ոլորտը պետք է հասցվի նվազագույնի, և պետք է ունենա հստակ ձևակերպված լիազորություններ),

- ռազմական կազմակերպումն ունի հստակ կառուցվածք (առանց գործունեության որևէ աղոտ ոլորտի, վերահսկողության և պատասխանատվության),
- զինվորականներին տրվում է մասնագիտական պատշաճ կրթություն:

Նման պայմաններում միայն հնարավոր է գործնականում իրականացնել ՁՈՒ աշնպիսի վերահսկում, որ կիսոչընդոտի քաղաքացիական հասարակության խնդիրներին բանակի միջամտությունը, միևնույն ժամանակ, ապահովելով դրանց ռազմական բարձր արդյունավետությունը: Սա նշանակում է, որ ՁՈՒ վերաբերող խնդիրները չի կարելի լուծել քաղաքական օրակարգում դրված խնդիրներից և հասարակությունում գոյություն ունեցող քաղաքացիական պատկերացումներից և սոցիալ-մշակութային իրողություններից զատ: Բանակն, ըստ էության, ոչ այլ ինչ է, եթե ոչ բռնության միջոց. հետևաբար, հասարակությունը պետք է որոնի պետական քաղաքականության այդ գործիքից բխող վտանգը հնարավորինս նվազեցնելու և ռազմա-քաղաքացիական հարաբերությունների ներդաշնակեցման ուղիներ: Զինված ուժերի օգտագործումը պետության սեփական ժողովրդի հետ «հարաբերություններ պարզելու» համար բացարձակ անթույլատրելի է. զինված ուժերի նշանակությունն ի սկզբանե այլ է:

Հայկական բանակը՝ գործունակ մեխանիզմ

Մեզանում հաճախ և հաճույքով նշվում է, որ փորձագետները դեռևս ՍՍՀՄ կազմում գտնվելու տարիներին չհայտարարված պատերազմի ընթացքում բանակաշինությունը սկսած Հայաստանի զինված ուժերը տարածաշրջանում առավել մարտունակն են համարում: Հայաստանում ռազմական շինարարության արդյունավետությունը կանխորոշված էր ոչ միայն իրավիճակով, այլև այն հանգամանքով, որ Խորհրդային բանակում կադրային զինվորականների շարքերում հայերը (սլավոններից և թաթարներից հետո) միշտ զգալի մաս են կազմել, ինչի շնորհիվ ազգային բանակը կառուցելիս Հայաստանը կադրային առավել քիչ խնդիր-

ների է հանդիպել, քան, ասենք, Ադրբեջանը, Տաջիկստանը կամ Թուրքմենստանը, որոնց ներկայացուցիչների թիվը *ԽՍՀՄ* զինված ուժերի ավագ սպայական կազմում ավելի քան համեստ էր²²: Փաստ է, որ «Հայաստանի զինված ուժերը մեր ժողովրդի անվտանգության և մեր երկրի զարգացման երաշխիքն են: Բացի այդ, Հայաստանի *ԶՈՒ* շնորհիվ պահպանվում է ուժերի տարածաշրջանային հավասարակշռությունը: Հայկական բանակը մեր պետության ամենահզոր կառույցներից մեկն է, որ առանցքային դեր է խաղացել անկախ պետականության կայացման գործում»²³: Փաստ է նաև այն, որ պետության անվտանգությունն ապահովվում է ոչ միայն երկրի զինված ուժերի և ուժային այլ կառույցների և ենթաբաժինների միջոցով, այլև՝ պետական և հասարակական բոլոր ինստիտուտների գործունեությամբ, և որ դրանց թուլությունը լուրջ սպառնալիք է հանդիսանում երկրի ազգային անվտանգության և կայունության պահպանման համար: Ռազմական ոլորտում բացասական միտումների սրմանը նպաստում է ռազմական կազմակերպման և ՀՀ պաշտպանական համալիրի բարեփոխումների ձգձգված գործընթացը, ազգային պաշտպանության ոչ բավարար ֆինանսավորումը և նորմատիվային-իրավական բազայի անկատարությունը: Արդյունքում, այս զուտ ներքին խնդիրները փաստորոն հանգեցնում են Հայաստանի ռազմական անվտանգության թուլացմանը:

Հասկանալի է, որ մեր բանակի բարեփոխման վեկտորը ուղղակիորեն կապված է մեր (և մեր տարածաշրջանում հիմնական դերակատարների) արտաքին քաղաքականության հիմնական գերակայություններից: Սակայն *ԶՈՒ* կառուցումը և զարգացումը սովորաբար կոնկրետ խն-

²² GazetaSNG.ru [14.03.2002] Военное строительство в странах СНГ на грани провала, Владимир Георгиев, "Евразия Сегодня" №5.

²³ Թորբերտ Փոչարյան, «Հայաստանի զինված ուժերը տարածաշրջանում ուժերի հավասարակշռության պահպանման երաշխիքն են» (նախագահի շնորհավորական ուղերձը Հայոց բանակի կայացման 14-րդ տարեդարձի կապակցությամբ), 28 հունվար, 2006 թ.:

դիրներին լուծման և, այսպես կոչված, «առաջանցիկ զարգացման» հարթությունում շարունակվում են անգամ այն ժամանակ, երբ ուղղակի փորձագետները ԶՈՒ բարեփոխումներն ավարտված են համարում:

Խնդիրներից մեկն էլ այն է, որ ի վիճակի լինենք համաշխարհային գործընթացներում բազմակողմ և ընդլայնվող ինտեգրացիայի շնորհիվ, նվազագույն ծախսերով, հասնել առավելագույն արդյունքների և կարողանալ հաղթահարել աշխարհի առջև ի հայտ եկած նոր մարտահրավերները: Սակայն կա ևս մեկ խնդիր՝ նվազեցնել բանակի որպես ներքաղաքական ակտիվ (և հաճախ անկանխատեսելի) գործոնի նշանակությունը: Անրաժեշտ է գիտակցել այն հիմնական հարցերը, որոնք պետք է լինեն քաղաքական (խորհրդարանական) վերահսկողության տակ: Դրանցից կարող են համարվել.

- պաշտպանական ծրագրումը և ֆինանսավորումը, ծրագրերի իրագործումը և բյուջեի կատարումը,
- ուղղակի-ֆաղափացիական հարաբերությունները (զինվորականների և ԶՈՒ ինտեգրումը հասարակության մեջ),
- իրավական շրջանակները, զինվորականների սոցիալական ապահովությունը և անվտանգությունը,
- ղեկավարման ոճը, զինվորական կադրերի մարզումը և ուսուցումը,
- պատրաստվածությունը մարտական գործողություններին:

Անձնական անվտանգության բավարար երաշխիքների, անձի և կրտսեր ուղղակի կազմի իրավունքների հարգման բացակայությունը, հատկապես խաղաղ պայմաններում, նվազեցնում է բանակի հասարակական վարկանիշը և հարվածի տակ դնում դրա մարտունակությունը: Սոցիալական պաշտպանվածության ցածր մակարդակը նպաստում է հանցավորության աճին, մասնավորապես՝ ավագ և բարձր սպայական կազմում կոռուպցիայի տարածմանը: Բանակի պահանջների նկատմամբ քաղաքական էլիտայի և հասարակության թեթևամիտ վերաբերմունքը, զինվորականների կենցաղի անբավարար պայմանները, անհարգալից վերաբերմունքը զինվորական ծառայության նկատմամբ, զինվորական ծարայության ցածր վարկանիշը շատ երկրներում հան-

գեցրել են նրան, որ բանակը ընդդիմադիր ուժերին աջակցություն ցուցաբերելով, նպաստում է գործող իշխանությունների տապալմանը, կամ էլ պարզապես «չեզոք» դիրք բռնելով, ճանապարհ է հարթում իշխանափոխություն իրագործողների համար: Այսպիսով, անհնարին է կառուցել պետություն և հասարակություն, եթե զինված ուժերում իրագործվող բարեփոխումները վերոհիշյալ խնդիրները չեն շոշափում:

Եզրակացություն

Զինված ուժերի խնդիրներն արդիական են ոչ միայն մեր երկրի նման անցումային շրջանի երկրների, այլև բոլոր պետությունների համար: Զինված ուժերը, պայմանների փոփոխականությամբ պայմանավորված, իրենց նկատմամբ անընդհատ ուշադրություն են պահանջում: Ձկա միակ, մեկընդմիշտ գործուն լուծում ո՛չ բարեկամներով և միայն դաշնակիցներով շրջապատված «հարուստ» երկրների, ո՛չ միջազգային ահաբեկչությանը համաշխարհային պատերազմ հայտարարած լուրջ տնտեսական և ֆինանսական խնդիրների հանդիպած գերտերությունների, և ո՛չ էլ նախկին կայսրությունների համար: Հասարակության անուշադրությունը բանակի հանդեպ, դրա գործունեության շուրջը ոչ թափանցիկ միջնորոտը միշտ հղի են մեծ խնդիրներով:

Բանակի աճող դերը Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքում, ինչպես և այդ դերի յուրահատկությունը ներքաղաքական պայքարում, չեն կարող անհանգստության տեղիք չտալ: Սակայն զինված ուժերի հանդեպ քաղաքացիական, հասարակական վերահսկողության անհրաժեշտության մասին քննարկումները հիմնականում մակերեսային և պոպուլիստական բնույթ են կրում: Ավելին, հասարակությունում չկա զինված ուժերի բարեփոխումների և դրանց վրա կիրառվող վերահսկողության ժողովրդավարական սկզբունքների ընդհանուր ընկալում: Մինչդեռ բանակի կյանքի որոշ ոլորտներում նման վերահսկողությունն անհրաժեշտ է և դրա իրականացման հնարավորությունը ուղղակիորեն կապված է ներքաղաքական նախադրյալների առկայության կամ բացակայության հետ:

Իհարկե, կա սոցիալական խնդիրների մի ողջ համալիր, որոնց չենք անդրադառնա. մասնավորապես պայմանագրային սկզբունքով բանակի ձևավորումը: Այնուամենայնիվ, այս պահին արդեն ավելորդ չէր լինի հետազոտել հասարակության կարծիքն այս հարցի վերաբերյալ, հաշվարկել նման տարբերակի թե՛ տնտեսական, և թե՛ հնարավոր այլ կողմերը, մոգելավորել իրավիճակը և դիտարկել դրա բոլոր դրական և բացասական կողմերը²⁴:

Բանակը հասարակության մի մասն է կազմում, հետևաբար, ռազմա-քաղաքացիական հարաբերություններում պարբերաբար տեղի ունեցող բարդացումներում առավել հաճախ մեղավորը հենց հասարակությունն է: Դրանցից խուսափելու համար հասարակությունը պետք է նախ և առաջ գիտակցի իր դերն ու պատասխանատվությունը սեփական պաշտպանության գործում:

Կարծում ենք, հայաստանյան հասարակությունում բանակի զարգացման խնդիրները խորը և բազմակողմանի վերլուծության կարիք ունեն: Ցավոք, օբյեկտիվ և այլ կարգի պայմաններից ելնելով, ոլորտում նման աշխատանքների անցկացումը այս պահին չի խրախուսվում: Արդյունքում, գործնականում ռազմա-քաղաքացիական ոլորտին վերաբերող լուրջ ուսումնասիրություններ շատ չեն, իսկ գոյություն ունեցողներն էլ համակարգված և շարունակական բնույթ չեն կրում: Մեզ մատչելի գրականության հիմնական զանգվածը վերլուծում է Հայաստանի

²⁴ Հայաստանում այս խնդիրն արդեն քննարկվում է. 2006 թվականի նոյեմբերի 16-ին երևանում տեղի ունեցավ «Մարդու իրավունքները և զինվորական ծառայությունը. պայմանագրային ծառայության հեռանկարները Հայաստանում» թեմաչով կրթ սեղան: Քննարկումը կազմակերպվել էր ԵԱՀԿ երևանյան գրասենյակի և «Հակաստվեր» հասարակական կազմակերպության կողմից: Մասնակցում էին ՊՆ, Գլխավոր դատախազության, Վերաքննիչ դատարանի և հասարակական մի քանի կազմակերպությունների ներկայացուցիչներ: ՀՀ ՊՆ կազմակերպության համալրման բաժնի պետ, փոխգնդապետ Հարություն Մուխսի-Հովեյանը մասնակիցներին ծանոթացրեց պայմանագրային հիմունքներով համալրման հայաստանյան բանակում գործող կանոնների հետ:

զինված ուժերի խնդիրները զարգացած ժողովրդավարության երկրներում ընդունված չափանիշների ԶՈՒ հանդեպ վերահսկողության և դրանց զարգացման նեղ կիրառական տեսանկյունից, դիտարկելով այն զուտ որպես երկրի անվտանգության ռազմական բաղադրիչ, ինչը, մեր կարծիքով, բավական չէ: Հասունացել է հասարակությունում ազգային բանակի ֆենոմենը այլ, ավելի արդիական ու բազմակողմանի տեսանկյունից դիտարկելու անհրաժեշտությունը՝ ամենատարբեր մասնագետների՝ սոցիոլոգների, հոգեբանների և հասարակության հետ կապերի մասնագետների ներգրավմամբ: